**ԺԵՆՅԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**
*Մագիստրոս*
*Երևանի պետական համալսարան*
andreasyanzhenya1@gmail.com
*DOI: 10.54503/978-5-8080-1587-6-475*

# ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ՝ ԱՐԵՎԵԼՔԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՓՈՔՐ ԱՐՁԱԿԸ

**Բանալի բառեր** - կյանքի և մահվան փիլիսոփայություն, հումանիզմ, ներանձնային կոնֆլիկտ, բռնակալ ուժ, անձնազոհություն, ապրումակցում:

**Ամփոփում**

Հոդվածը նվիրված է Ավետիք Իսահակյանի՝ արևելյան թեմաներով և մոտիվներով գրված փոքր արձակի ուսումնասիրությանը, այդ երկերում արտացոլված գաղափարական և փիլիսոփայական հարցադրումների քննությանը: Ուսումնասիրության են ենթարկվել իսահակյանական ընդհանրացումները կյանքի և մահվան առեղծվածի, ճշմարտության և ազատության մարդկային փնտրտուքների վերաբերյալ: Աշխատանքում ցույց է տրվում, որ Իսահակյանի ստեղծագործական աշխարհում կյանքի և մահվան առեղծվածի բացահայտումը և՛ համամարդկային համընդհանուր փնտրտուք է, և՛ անհատի անձնային դրամա, որն ունի իր արտահայտման յուրօրինակ ձևն ու միջոցները, ուստի այն դուրս է գալիս տարածաժամանակային ու ազգային սահմանափակումներից՝ ընդգրկելով տարբեր ժողովուրդների մշակութային կենսափորձն ու փիլիսոփայությունը:

**ZHENYA ANDREASYAN**
*Master's student*
*Yerevan State University*
andreasyanzhenya1@gmail.com

# AVETIK ISAHAKYAN'S SHORT PROSE DEDICATED TO THE EAST

**Keywords:** philosophy of life and death, humanism, internal conflict, tyrannical power, self-sacrifice, empathy.

**Abstract**

This article is devoted to the study of Avetik Isahakyan's short prose, rich in Eastern themes, motifs, imagery, and philosophical elements. The article examines the ideological and philosophical issues reflected in his works. It analyzes Isahakyan's generalizations concerning the mystery of life and death, as well as humanity's search for truth and freedom. The study shows that in Isahakyan's creative world, the revelation of the mystery of life and death is both a universal collective quest and an individual personal drama, expressed through unique forms and means. Thus, it transcends spatial-temporal and national boundaries, encompassing the cultural experience and philosophy of different peoples.

**ЖЕНЯ АНДРЕАСЯН**
*Магистрант*
*Ереванский государственный университет*
andreasyanzhenya1@gmail.com

# МАЛАЯ ПРОЗА АВЕТИКА ИСААКЯНА, ПОСВЯЩЁННАЯ ВОСТОКУ

**Ключевые слова:** философия жизни и смерти, гуманизм, внутренний конфликт, тираническая сила, самопожертвование, эмпатия.

**Аннотация**

Статья посвящена исследованию малой прозы Аветика Исаакяна, насыщенной восточными темами, мотивами, образами и философскими элементами. В статье рассматриваются идейные и философские вопросы, отражённые в его произведениях. Анализируются исаакяновские обобщения, связанные с тайной жизни и смерти, а также с человеческими поисками истины и свободы. Работа показывает, что в творческом мире Исаакяна раскрытие загадки жизни и смерти является как общечеловеческим коллективным поиском, так и личной драмой индивида, имеющей свои особые формы и средства выражения. Таким образом, это выходит за пространственно-временные и национальные рамки, охватывая культурный философский опыт различных народов.

**Ներածություն**

Իսահակյանական գեղարվեստական աշխարհակերտման առաջմղիչ ուժը տիեզերքի անմեկնելի գաղտնիքների, կյանքի և մահվան հավերժական առեղծվածի, անորսալի ճշմարտությունների բացահայտման համառ ջանքն ու փնտրտուքն է: Վարպետը թափանցում է մարդկային էության ամենաբարդ, նրբին և խոր տարածությունները՝ դիպչելով մարդու գոյության մեծագույն կոնֆլիկտին՝ կյանքի և մահվան հավերժական խնդիրներին: Մարդը տառապում է կյանքը լիովին և անմնացորդ ըմբռնելու անհնարինությունից: Նրա միտքը մշտապես թափառում է՝ պատասխաններ գտնելու ծարավով, սակայն տիեզերքի անմեկին գաղտնիքների բացահայտումը հավերժ անհասանելի է մնում նրան: Մարդը երբեք լիարժեք իմացության չի հասնում, այլ գտնում է միայն փշրանքներ, որոնք ավելի են սաստկացնում տեսնելու ծարավն ու կուրության տառապանքը:

Այս հարցերի որոնման ճանապարհին Ավ. Իսահակյանը դիմում է տարբեր ժամանակաշրջանների և տարբեր ժողովուրդների իմաստնությանն ու կենսափորձին: Նա հաճախ է գնում դեպի ժողովրդական փիլիսոփայություն՝ դիմելով արևելյան գունեղ, հմայիչ ու զգայական մոտիվներին, պատկերներին և անզուգական երևակայությանը:

Արևելքի չքնաղ պատկերները հագեցած են բազմաբովանդակ

շերտերով, որոնք ուսումնասիրության անսպառ հնարավորություններ են տրամադրում: Այս գործերում ժողվրդական իմաստնությունը միաձուլվում է հանճարի պատկերավոր մտածողությանն ու նրա գեղարվեստական ձիրքին. արդյունքում ծնվում են մեծարժեք և բազմախորհուրդ գործեր, որոնք փիլիսոփայական և հոգեբանական անհաշիվ շերտերի հայտնաբերման և բազմակողմանի մեկնաբանման աղբյուր են դառնում: Մեր նպատակն է վեր հանել և ուսումնասիրել մարդ էակի գոյության դրամայի, կյանքի անցողիկության, մահվան անխուսափելիության, սիրո, ճշմարտության և գեղեցկության որոնման հարցերը Իսահակյանի ՝ արևելյան մոտիվներով գրված փոքր արձակում:

**Կյանքի և մահվան բախումը մարդկային ներաշխարհում**

Մահվան անխուսափելիության գիտակցումը և այդ գիտակցման հետ հաշտ լինելու անկարողությունը հոգեկան ներքին կոնֆլիկտի պատճառ են դառնում, որը ուղեկցում է մարդուն ամբողջ կյանքի ընթացքում՝ սրվելով հատկապես կյանքի ու մահվան սահմանագծին, երբ ավելի ու ավելի է մոտենում մահվան շունչը: «Անանդան և մահը» ստեղծագործության մեջ մարդկային էության այս անհաշտ պայքարն է անբեկանելի մահվան դեմ: Կյանքի տենչանքը հզոր է և անհաղթահարելի, տիեզերքի ամեն մի հյուլե անզիջում պայքարի մեջ է մեռնելու և գոյից ոչնչի փոխվելու իրողության դեմ. «Ես տեսնում եմ, որ կյանքը մշտնջենական անհաշտ մաքառման մեջ է մահի դեմ, և իմ բոլոր ըղձերն ու տենչերը աղբյուրների և առվակների պես իրար հյուսվելով ընթանում են մի հունով՝ մահի հանդեպ միայն նրան դիմադրվելու համար: Ես տեսնում եմ, որ բոլոր իմաստությունները մահի դեմ են ծառանում, և բոլոր կրոնները եղել են մահի սարսափը մեղմելու համար, և ինքնասպանն իրոք մահից խուսափելու համար է դիմում մահին» (Իսահակյան Ավ, 1987: 414):

«Այս լեգենդում Անանդան հանդես է գալիս իբրև մարդու խորհրդանշական հավաքական կերպար,-նկարագրում է Ա. Իսահակյանը,- որը հավերժական գոյամարտի մեջ է մահվան դեմ» (Իսահակյան Ա., 1975: 68): Անանդան՝ որպես մարդ տեսակի ներկայացուցիչ, ամեն ինչ անում է իր գոյը պահպանելու համար: Նա համաձայն է ապրել ամենազարհուրելի տառապանքների մեջ՝ զրկված բոլոր

զգայարաններից և բանտված ինքն իր մարմնում, միայն թե զգա, որ ինքը կա, խորհում և ապրում է: Մի ակնթարթ նրա տանջահար էությունը փորձում է համակերպվել անխուսափելիի հետ, ժխտել կյանքը և մահը դիտարկել որպես ազատարար փրկություն. «Եվ մի՞թե կյանքը տանջանքների այն կուռ շղթան չէ, որ փաթաթված մեր վզով քաշում է մեզ փոշու և փշերի միջով, հրի ու սրի միջով, և մահն է որ գալիս փրկում է տառապող մարդուն, խորտակում բռունցքները, սրերը ժանգոտում և վերջ դնում չարին ու բռնակալին, ագահությանը և պատերազմին» (Իսահակյան Ավ., 1987: 414):

Սակայն մահը կյանքից վեր դասելու այս անվստահ փորձն իրականում դրա դեմ պայքարի ձևերից մեկն էր: Մարդ էակը չի կարող հաշտվել մահվան հետ, այս միտքը Իսահակյանի գեղարվեստական աշխարհում բազմիցս շեշտվում և հաստատվում է. «Մարդկությունը ապրել է հարյուր հազար տարիներ, թերևս միլիոն տարիներ և մեռել է շարունակ, բայց ձեռք չի բերել մահվան բնազդ: Մահվան հետ հաշտվելու զգացում: Որ մի անգամ ծնվել են՝ հավիտյան ուզում են ապրել և չմեռնել: Ծառի մեծ մասը չորացել է, բայց մի ճյուղ դեռ ծաղկում է... տերև է տալիս, ուզում է ապրել» (Իսահակյան Ավ., 1977: 401):

Մեկդարյա խորհրդածություններից հետո թվում է՝ Անանդային հաջողվեց հասկանալ մահը և գտնել գերակայությունը նրա հանդեպ, նա հաղթահարեց սարսափն ու հասավ ներդաշնակության՝ լուծելով մահվան հավերժական առեղծվածը: Բայց մահվան վերջին քմծիծաղը մեզ հուշում է, որ դա միայն պատրանք է, և մարդը դեռևս շա՛տ հեռու է տիեզերքի այս մեծ խնդիրը լուծելու տեսլականից:

Մարդ էակի ապրելու ծարավը երբեք չի հագենա: Ապրելու տենչը հզոր է, այն իշխում է բոլոր հուսահատությունների ու հիասթափությունների վրա՝ հաղթանակ տանելով մարդկային հոգում: Այդ հաղթանակի հաստատումն ենք տեսնում «Սաադիի վերջին գարունը» չքնաղ գործում: Երկար է ապրել Սաադին, հարյուր գարուններ է վայելել երջանկության և տխրության բանաստեղծը, բայց հոգին դեռ ծարավ է աշխարհի չքնաղ իրերին և ձևերին, երգերի և լռության հետ հարաբերվելուն: Զարմանալի է կյանքը, և չքնաղ է հոգին, որը տես-

նում և զգում է կյանքի գեղեցկությունները. «Եվ ամեն օր նայում եմ աշխարհին և ամեն օր զարմացած, կարծես առաջին անգամն եմ տեսնում աշխարհը՝ առօրյա և միշտ հիասքանչ, աշխարհը՝ հնօրյա և միշտ նորաստեղծ, հավիտենական մի անծանոթ հրապույրով առինքնող» (Իսահակյան Ավ., 1987: 374): Սաադիի շուրթերով Իսահակյանը հնչեցնում է յուրաքանչյուր ոգու և սրտի ճիչը՝ կյանք կոչվող ակնթարթը նկարագրելու համար. «Ծնվում ենք ակամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով» (Իսահակյան Ավ., 1987: 376):

Այդ ակնթարթը երկար է թվում կյանքի հորձանքի մեջ տարուբերվող մարդուն, քանի դեռ չի մոտեցել վերջը: Մարդը վստահ է, որ դեռ շատ ժամանակ ունի, և ամեն ինչ առջևում է: Միայն սահմանագծին հասնելով է ըմբռնում, որ տիեզերքի հավերժության մեջ ինքը մի աննշան հյուլե է, իսկ իր կյանքը՝ մի խաբուսիկ երազ: Այս գաղափարի գեղարվեստական և դիպուկ արտացոլումն է «Շիդհարը» ստեղծագործությունը: Շիդհարին խելագար են անվանում, բայց, ի պատասխան, միայն մի դաժան ծաղր է կծկվում նրա սևաթույր շրթների անկյունում. «Այն թռչող վայրկյանը, որ մարդիկ կյանք են անվանում, հավերժական է թվում այս խեղճերին... Սակայն, ո՛վ փրկարար պատրանք... իրենց խխունջից տիեզերական օվկիանոսի խորհուրդներն են լուծում և օրենքներ են սահմանում անհունին և անսահմանին... Անապատի վրայից սահող ամպի ստվերից ավելի ստահոդ է ձեր էությունը...» (Իսահակյան Ավ., 1987: 399):

**Եսասիրությունն ու մարդասիրությունը**

Իսահակյանը կերտել է նաև աշխարհակալ բռնակալների կերպարներ, որոնք, թվում է, ամենազորեղն են, բայց ինչպես բոլոր մահկանացուները, նրանք ևս ստիպված են կանգնել մահվան առջև, զգալ սեփական ոչնչությունը բնության անբեկանելի օրենքների դեմ և բախվել իրենց անզորության գիտակցմանը:

Հազար ու բյուր երկրներ էին ծնկի եկել Չինգիզ-խանի առաջ, բյուրավոր ժողովուրդների գանգերից բուրգ և աշտարակներ էր շինել ահեղ տիրակալը, բայց արդեն ծերացել էր և լեռներ սասանող ոտքերը դժվարությամբ էր շարժում: Մեծ մոնղոլը իր յուրաքանչյուր բջիջով զգում էր, որ մոտենում է մահը: Երբ մարդը զգում է մոտալուտ վախ-

ճանը, սկսում է վերանայել իր ապրած կյանքը. նա փորձում է կշռել իր անցած ճանապարհի ու կատարած գործերի արժեքը:

Մեծ բռնակալի՝ մահվան դեմ պայքարելու ձևն իր մեջ սառած կյանքը կրկին վերակոչելու համառ ջանքն էր. «Է՜յ վեզիր, նվաղած ձայնով դիմում է խանը,- ձանձրանում եմ ես, սաստիկ ձանձրանում... կանա՛յք բերեք, թո՛ղ պարեն, երգեն, թո՛ղ լոգանք անեն մոտս, գինի՛ բերեք, հարյուր տարվա հրաբորբոք գինի (Իսահակյան Ավ., 1987: 400):

Բայց հանգել է խանի արյունը, ոչ մի վայելքի չի արձագանքում հոգին, և վրա է հասնում ծանրագույն գիտակցումը՝ իր համար այլևս ամեն ինչ վերջացած է. «Ով կանանց է տիրում, նա, իրոք, աշխարհին է տիրում, իմ թագավորությունը չարժե երիտասարդ հովիվի կրակե մի համբույրին» (Իսահակյան Ավ., 1987: 402): Իր երբեմնի ուժով նա փորձում է կռվել մահի դեմ, հրամայում է շրջափակել ամրոցը, փակել բոլոր պարիսպները, հսկել աշտարակներն ու բուրգերը, որ չարագուշակ ճակատագիրը չկարողանա ներս սողոսկել: Բայց այդ ճակատագիրը երբեք մարդուց անջատ և հեռու չի լինում: Վարպետը մահվան շուրթերով հնչեցնում է կյանքի իմաստուն փիլիսոփայությունը. «Ես հեռվից չեմ եկել,-ասում է մահը, ես միշտ քո մեջն էի, քեզնից անբաժան. երբ երիտասարդ էիր ու առույգ, դու էիր ինձ հաղթում, բայց ես մաքառելով ուժերդ մաշեցի. հիմա հաղթահարված ես դու, վերջին խոսքդ ասա և գնանք...» (Իսահակյան Ավ., 1987: 404):

Իսահակյանը կենտրոնանում է բռնակալի ներաշխարհի վրա՝ ներկայացնելով հոգեկան բոլոր անցումները՝ կյանքի բոցը վերագտնելու հույսը, սեփական անզորության և անխուսափելի մահվան գիտակցումը և այդ գիտակցումից ու անկարողությունից ծնված չարությունը: Այդ սոսկալի չարությունը և բացարձակ եսասիրությունը պոռթկում են, և հնչում է խանի վերջին հրովարտակը. «Հրամայում եմ իմ պետության բոլոր աղբյուրներն ու գետերը, ծովերն ու օվկիանոսները թունավորեցեք, որ ինձ հետ մեռնեն ամենքը, ամենքը...» (Իսահակյան Ավ., 1987: 404):

Բռնակալության մի նոր և թերևս ավելի սարսափելի տիպար է Շի-Հուանգ-Տի Բողդիխանը: Չինգիզ-խանի նման նա նույնպես աշ-

խարհակալ է և կարող է մի հրամանով աշխարհներ կործանել: Ինչպես նկատել է Հ. Վանյանը, ի տարբերություն Չինգիզ-խանի, որը ձգտում էր իր տիրապետությունը հաստատել ոչ միայն կյանքի, այլև մահվան վրա, Շի-Հուանգ-Տի Բողդիխանը ձգտում էր տիրել ոգուն և մտքին (Վանյան, 2014: 84): Նրա բռնանալու միտումները ավելի հեռու են գնում՝ հասնելով մի նոր հարթության: Նա փորձում է սահմաններ գծել անսահմանի համար և հանդգնում է կապանք դնել տիեզերական ոլորտներում ազատ ու անկաշկանդ թափառող մարդկային իմաստության վրա: Արդեն այրվել են բոլոր մատյանները, գլխատվել են գիտուններն ու իմաստունները, և հնչել է բռնության մեծագույն ճիչը. «Հրովարտակեցեք աշխարհե-աշխարհ, որ Շի-Հուանգ-Տի Բողդիխանը սպանեց Ոգին ու Միտքը, որովհետև Ոգին մղում է դեպի անհուսություն, միտքը՝ դեպի մահ: Կորչեն Ոգին ու Միտքը: Կեցցե՛ կյանքը անգիտակ և բնազդային» (Իսահակյան Ավ., 1987: 399): Իսահակյանը մահը դիտարկում է նաև որպես բռնակալին և չարագործին արդար պատիժ հասցնող ուժ: Ա. Ինճիկյանը նկատել է, որ Իսահակյանը ի դեմս մահի տեսնում է աշխարհի անողոք հզորներին և արյունռուշտ բռնակալներին պատժող, նրանց գործած բոլոր չարիքների համար վրեժխնդիր եղող արդարադատությունը (Ինճիկյան, 1977: 47): Որքան էլ ահարկու ու վճռական լինի բռնակալի կամքը, այն ի զորու չէ իշխելու մարդկային մտքի և իմաստության ծարավ ոգու վրա: Կեղծ էր այդ հրովարտակը, և ինքն էլ գիտեր, որ կեղծ է. գիտեր, որ չի կարողանա բանտել անսահմանությունը, որ իր դրած կապանքները անկարող են, բայց բռնակալի ոգին չէր կարողանում համակերպվել այդ իրողության հետ: «Ի՞նչ-ի և ինչո՞ւ-ի» մասին այն հարցերը, որոնք նա փորձել է թաղել, մշտարթուն են իր իսկ հոգում, ուրեմն ապարդյուն են իր բոլոր ջանքերը: Նրա բռնակալ ուժը պարտություն է կրում, և այս գիտակցումից ծնված հուսահաուությունն էլ նրան մղում է միակ վճռական քայլին. «Երեկոյան պալատականները գտան Բողդիխանին գահույքի վրա մեռած՝ դաշույնը սեփական ձեռքով իր սրտի մեջ խրած» (Իսահակյան Ավ., 1987: 399):

Բռնակալը, որը փորձում է իր իշխանությունը նյութական աշխարհից վեր գտնվող ոլորտների վրա տարածել, որտեղ մարդկային

ձեռքը չպիտի հասնի, պատժվում է դաժանորեն: Այդ պատժիչ գործոնը երկու բռնակալների դեպքում էլ մահն է:

Իսահակյանի բարձրագույն դավանանքը մարդասիրությունն է: Մարդ էակի կյանքի իմաստավորումը նա գտնում է իր նմանի ցավը տեսնելու և կիսելու մեջ: «Մարդը չպիտի մտածի աշխարհից բան տանելու մասին, այլ աշխարհում բան թողնելու մասին» (Իսահակյան Ավ., 1988: 315): Ահա այսպիսի գաղափարական շեշտադրումներով է Իսահակյանը կերտում մարդ-իդեալին: Իր ստեղծագործական ոլորտում բռնակալությանն ու եսասիրությանը Իսահակյանը հակադրում է բարձրագույն մարդասիրությունն ու անձնազոհությունը: Ինչպես տեսանք, կյանքի անցողիկության գաղափարը արդեն իսկ արծարծվել էր մի շարք ստեղծագործություններում, բայց առավել կարևոր է մարդու ընտրությունը այդ անցողիկ, հեշտասահ ճանապարհին: «Չինգինզ-խանը» և «Շի-Հոանգ-Տի Բողդիխանը» գործերում մարդը ընտրեց մինչև վերջին վայրկյանը կյանքը քամելու, հնարավորինս շատ վերցնելու, գողանալու և բռնանալու ճանապարհը՝ փորձելով հագեցնել հոգու գոյաբանական դատարկությունը: Իսահակյանը ցույց է տալիս, որ ընտրության այս ճանապարհը խաբուսիկ է, այն չի կարող լցնել մարդու հոգու մեջ առաջացած եսասիրական անդունդը: Գոյաբանական ճգնաժամի մեջ տառապող մարդը կյանքի իմաստի որոնման ճանապարհին այս պահը կարող է իսկապես իմաստալից դարձնել միայն սիրով և ապրումակցումով, որի բարձրագույն դրսևորումը անձնազոհության պատրաստակամությունն է:

«Բուդդիան՝ թռչուն» ստեղծագործության մեջ թռչունի վերափոխված Բուդդիան իրեն զոհաբերում է՝ քաղցած մանկան տառապաքներին վերջ տալու համար: Կեցության դառը անհրաժեշտությունը ծանրացած է բոլոր էակների վրա. «Անհու՛ն է ապրել կամեցողի տառապանքը. բայց թող ապրի այս մանուկը» (Իսահակյան Ավ., 1987: 452-453): Անձնուրացության այս սրբազան քայլով նրա հոգին լուսավորվում և իմաստավորվում է: Իսկ «Ուշինարա» ստեղծագործության մեջ հերոսը անգղից հալածված աղավնուն իր պաշտպանության տակ է առնում և նրա կյանքը փրկելու համար իր իսկ մարմինն է տալիս գիշատիչ անգղին: Ուրեմն Իսահակյանը հավաստում է,

որ կյանքի իմաստավորման ուղին սերն է, բարությունն ու կարեկցանքը, որ երբեմն մղում է բարձրագույն զոհողության:

Իսահակյանի փոքր արձակը հագեցած է փիլիսոփայական խոր ենթատեքստերով: Այսպես, «Հին ամրոցը» ստեղծագործության մեջ ազատության որոնման ճանապարհն է ներկայացվում: Մարդը ազատությունը փնտրում է ամենուր, շատ երկար է ապրում այդ փնտրտուքի մեջ, մինչև հասկանում է, որ միայն իր ներսում է կարելի գտնել այդքան բաղձալին: Անազատ մարդը տառապում և ատում է իրեն ազատությունից զրկողին, մինչև հասկանում է, որ ինքն է իր առջև պարիսպներ կառուցում և ձեռքերը մեկնում՝ շղթայելու: Հին ամրոցի բնակիչները շատ երկար ապրեցին իրենց իսկ սահմանած բռնակալության ճիրաններում, բայց հետո իրենց ներսում գտան ազատության աղբյուրն ու կործանեցին բոլոր շղթաները:

**Եզրակացություն**

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ավետիք Իսահակյանի՝ արևելյան մոտիվներով գրված փոքր արձակը աչքի է ընկնում ընդգրկուն և խորը տեսադաշտով: Իր ստեղծագործությունների համար նա ընտրել է համամարդկային նշանակության թեմաներ՝ կյանք, մահ, գոյության իմաստ, եսասիրության և մարդասիրության հակադրություն, ազատության և ճշմարիտի փնտրտուք, սեր և անձնազոհություն: Այս թեմաները նրա ստեղծագործական աշխարհում իրացվել են արևելյան հարուստ ու հմայիչ պատկերներով, մոտիվներով և ժողովրդական փիլիսոփայությամբ: Իր մարդասիրական գաղափարներն արտահայտելու համար Իսահակյանը պատմության խորքերից հայտնաբերել է հերոսներ, դրվագներ, կերտել է բնավորություններ, դիմել է ժողովրդի իմաստությանը, ոճին, բառ ու բանին: Նա հաստատել և բարձրացրել է մարդասիրությունը՝ ցույց տալով, որ այն մարդկային անցողիկ կյանքը իմաստավորելու միակ ճանապարհն է:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. **Ինճիկյան Ա.,** Ավետիք Իսահակյան, Երևան, «Սովետ. գրող» հրատ., 1977, 260 էջ:
2. **Իսահակյան Ա.,** Ավետիք Իսահակյանի արձակը, Երևան, «Հայաս-

տան» հրատ., 1975, 280 էջ:
3. **Իսահակյան Ավ.,** Երկեր, Երևան, «Սովետ. գրող» հրատ., 1987, 888 էջ:
4. **Իսահակյան Ավ.,** Հիշատակարան, Երևան, «Սովետ. գրող» հրատ., 1977, 471 էջ:
5. **Իսահակյան Ավ.,** Ծանոթ և անծանոթ էջեր, Երևան, «Արևիկ» հրատ., 1988, 333 էջ:
6. **Վանյան Հ.,** Ավետիք Իսահակյանի չափածո և արձակ լեգենդները, Երևան, «Տիր» հրատ., 2014, 176 էջ:

## REFERENCES

1. **Inchikyan A.,** Avetik Isahakyan [Avetik Isahakyan], Yerevan, “Sovet. grog” hrat., 1977, 260 ej.
2. **Isahakyan A.,** Avetik Isahakyani ar´dzaky [The Prose of Avetik Isahakyan], Yerevan, “Hayastan” hrat., 1975, 280 ej.
3. **Isahakyan Av.,** Erker [Works], Yerevan, “Sovet. grog” hrat., 1987, 888 ej.
4. **Isahakyan Av.,** Hishatakaran [Memoir Book], Yerevan, “Sovet. grog” hrat., 1977, 471 ej.
5. **Isahakyan Av.,** Tsanot yev antsanot ejer [Familiar and Unfamiliar Pages], Yerevan, “Arevik” hrat., 1988, 333 ej.
6. **Vanyan H.,** Avetik Isahakyani chapatso yev ar´dzak legendner₀ [The Verse and Prose Legends of Avetik Isahakyan], Yerevan, “Tir” hrat., 2014, 176 ej.